

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

ՎԱՌՎԱՌԵ ԶՈՆՑՈՆ.

ԳԼ. Բ.

Հետեւալ օրն առաւօտեան Վիրջինիան Աննա Կրոսի հետ միասին գնաց Վարվառէ Զոնտոնի մօտ Նրա տնակը դանուում էր քաղաքի ամենավերջին ծայրում, դաշտի մէջ։ Այնտեղ չեր գնում ոչ ձիաքարչ և ոչ էլ հանրակառք։ Միմիայն մօտից անցնում էր մեծ խճուղի։

Տնակը փայտաշէն էր, հինդ լուսամուտով։ Շուրջը պարտէղ ու բանջարանց կար, որտեղ մէկու մէջ երեսում էին և ծաղիկներ։ Տնակի մօտ շագանակի ծառեր էին տնկուած։ Նրանց տակ դրուած էին նստարաններ և մի կլոր սեղան։

Երբ Վիրջինիան հասաւ տնակին, լուսամուտները բաց էին և ներսում երեսում էին տասի չափ մարդիկ։ Վերջինիան մօտեցաւ մուտքի դրանը։ Այդտեղ Նրա առաջ դուրս եկաւ մի առոյգ, ամրակազմ պառաւ կին, ամբողջովին սև հագած։ Նրա գէմքը փայլում էր մի ինչ որ առանձին քնքշութեամբ։ Կարծես Նրա գէմքը ամբողջովին մի սիրալիր ժպիտ էր, թէպէտ և Նրա շրժունքները հանգիստ էին։

—Աս է քոյր Վարվառէն, ասաց Աննան Վիրջինիային և գլուխ տալով պառաւին աւելացրեց, ողջոյն ձեզ մենք ձեզ մօտ ենք գալիս։

—Այս, մենք ձեզ մօտ ենք եկել մի շատ կարեսը գործի համար, յարեց Վիրջինիան։

—Համեցէք ինդքեմ, ասաց քաղցրոթեամբ պառաւը։ Պատրաստ եմ ծառայելու, ինչով կարող եմ։

Նա բաց արաւ գուռը և Վիրջինիային ու Աննային ներս հրաւիրեց, Վիրջինիան ներս մտաւ և հէնց շէմքի

վրայ զարմացած կանգ առաւ։ Ուղիղ իւր առաջ, դրան գիմացի պատի վրայ մի մեծ խաչ կար կախուած խաչեցեալ Փրկչի մի հրաշալի նկարով։ Արեի ճառագայթները ընկել էին ուղղակի տանջուած ճակատը զարդարող ոսկեայ պսակի վրայ։ Դէմքը կարծես փայլում էր և այդ դէպի ինքը կոչող անսահման փայլն էր։

Վիրջինայի սիրաը ջերմութեամբ լցուեցաւ։ Պառաւը նկատեց խաչելութեան պատկերի թողած տպաւորութիւնը Վերջինիայի վրայ և ուրախութեամբ ասաց։

— Այդ լաւ է, չէ։ Այնաեղ, մեր շէմքից դուրս, քառաքի մեծ փողոցներում հալածում են այդ անտուն թշուառներին, երես դարձնում նրանցից։ Իսկ այստեղ հէնց որ ներս են մտնում, Քրիստոսին հանդիպում են որ կերակրում էր քաղցածներին, բարեկամ էր մեղաւորներին և իւր հետ առաջինը աւազակին դրախտ տարաւ։ Նրանց հագին ակամայ տարուում է դէպի Մեծ նահատակը և դէմ վայրկենապէս խաղաղուաւմ։

Այդ ասելով պառաւը ձեռքով ցոյց տուեց սեղանի շուրջը նստածներին։ Նրանք մի խայտարդէտ խումբ էին կազմում։ Այդտեղ կային երկու կին, մէկը պառաւ, միւսը դեռահաս։ Երկու ներ և մի քանի աղքատ թափառաշրջիկներ ու անգործ բանուորներ։ Բոլորն էլ հիւծուած, կեղտոտ ու ցնցոտիներով պատած։ Նրանք վերջացնում էին իրենց ճաշը, որ մի տեսակ կերակրից էր բաղկացած։ Նրանցից մէկը գոհ սրտով ասաց։

— Լաւ ճաշեցինք, կերանք ու կշտացանք։ Շնորհակալ ենք, քոյլ Վարդառէ, Աստուած քեզ երկար կեանք տայ։

— Ոչ թէ ինձնից պէտք է շնորհակալ լինիք, ասաց պառաւը, այլ նորանից, Որը կերակրում է բոլոր քաղցածներին, կերակուր է տալիս ամբողջ աշխարհին։ Աղօթենք Աստուծուն։

Ճաշողները ոտքի կանգնեցին։ Պառաւը մօտեցաւ Խաչելութեանը և երկիւղածութեամբ սկսեց աղօթել, հատիկ հատիկ արտասանելով խօսքերը։

— Դու, որ անձրե ու արեի ջերմութիւն ես ուղար-

կում մարդկանց արտերին. Դուք, որ կերակրում ես մեզ լիացնում, լցրու մեր սրտերը Քո արդարութեամբ, լցրու մեր հոգին Քո մաքուր սիրով, ամէն,

—Ամէն, ասսացին ամենքը միաբերանս,

—Իսկ այժմ, բարեկամներ, սեղանը հաւաքեցէք, ամանները լուացէք և գնացէք, Տէր ընդ ձեզ Թողէք, որ այժմ ուրիշները ճաշեն, ասաց քոյր Վարդառէն,

—Միթէ արդէն նրանք ճաշեցին, զարմացած հարցրեց Վիրջինիան, Զէ որ դեռ առաւօտ է, հազիւ ժամի տասը լինի:

—Հարուսար ուտում է, երբ կամենում է, իսկ աղքատը՝ երբ կարողանում է, պատասխանեց ժպտալով պառաւը: Մեզ մօտ ճաշել են սկսում առաւօտեան ժամի վեցից, հէնց որ կարողանում ենք հասցնել: Զէ որ մեր հիւրերը շաբաթներով քաղցած են լինում, ուրեմն զարմանալու բան չէ, որ նրանք երբ էլ որ պատահի՝ կարող են ճաշել: Ահա նրանք արդէն ճաշեցին, այժմ կը գնան գործ փնտռելու. կը դտնին՝ Աստուծուն փառք, չեն դտնիլ՝ գոնէ սոված չեն մեռնիլ:

Այս. բայց չէ որ այդպիսով նրանք անգործութեան կը սովորին և այլ ևս չեն ուզիլ աշխատել, նկատեց Վիրջինիան: Այդպէս ձրի ուտելը գուցէ նրանց փչացնի ու ձրակերութեան սովորեցնի:

—Ե՞ս, սրդիս, հեղութեամբ պատասխանեց պառաւը Վիրջինիային: Մենք իրաւոնք չունինք դատելու այդ «ձրիակերներին»: Մեր մէջ քանի քանի մարդիկ ամբողջ կարողութիւններ, տասնեակ ու հարիւր հազարներ են ուտում: Քանիսը մեղնից համարձակապէս կարող են ասել, որ իրենք իրենց աշխատած հացն են ուտում: Մենք ինքներս աշխատում ենք ամեն կերպ նպաստներ ու թոշակներ ստանալ, կապահներ վերցնել և ոչ ոք չէ վախենում, որ այդ մեզ կարող է փչացնել: Իսկ երբ տարիներով քաղցած մի թշուառ պատահաբար մի կուշտ ճաշ է անում ձրիապէս, ամենքը սկսում են անհանգիստ լինել, որ վինի թէ այդ նրան փչացնի: Ոչ, սի-

րելիս, այստեղ վշանալու երկիւզ չկայ. Այդ մարդիկը իրենք հասկանում էն, որ իմ ամեն մի կոպէկը հաշուած է, որ եթէ մէկը աւելորդ տեղը ուտի, իրա նման մի ուրիշ թշուառի բաժինը պիտի պակասի, երեք տարի է, որ ես այստեղ նրանց հետ եմ լինում և իշարը գործ գնել չեմ տեսել.

Մինչ պառաւ տանտիկինը այդպէս խօսում էր Վերացինիայի հետ, ճաշողները սեղանը հաւաքեցին, ամանները լուացին, յատակը սրբեցին և դնացին:

Վերջինիան յափշտակուած դիտում էր այս ամենը՝ Բոլոր տեսածն ու լսածը նրա համար միանգամայն նոր էր և օտար և միհնայն ժամանակ այդ բոլորը խորապէս յուզում էին նրան և դէպի քրիստոնէական կենդանի ոիշոյ աշխարհը ձգում:

Միբելիս, ասաց պառաւը Վերջինիային, տեսէք որքան հեշտ է մարդկանց ոտքի կանգնեցնել, բարեփոխել, եթէ որ նրանց մօտեցողը իւր սրտում գէթ մի կաթիլ ճշմարիտ քրիստոնէական սէր ունենայ. Սակայն մարդիկ այդ գործը շատ դժուար կամ նոյն խոկ անիրազործելի են համարսւմ: Ես կտրծում եմ, որ այստեղ նոյն սովորական տիսուր պատմութիւնն է կրկնուում, վատ և անսպատրոստ մշակները փոխանակ իրենց անպատրաստութիւնն ու անընդունակութիւնը խոստովանելու և աւելի պատրաստի ու բարի աշխատաւորների անհրաժեշտութիւնը պիտի մասնակու գործ կատարելու անհնարաւորութեան, անյազմելի խոշոնդուուների մասին են խօսում, իրենց մեղքը ուրիշների վրայ ձգելով: Փոխանակ ամուր ու զօշուկ լծակի, նրանք մուլաբար փառած փայտով են մօտենում ահագին ժայռին, որ բռնում է դէպի ազատութիւն ու լոյս տանսղ ճանապարհը, մի երկու անդամ՝ փորձում են մասով շարժելու և երբ ոչինչ չի դուրս գալիս ու ժայռը անշարժ մնում է իւր հախկին տեղում, ոկտում են ողբալ ու ասել թէ այստեղ գործ կատարել չի կարելի: Այն ինչ, բանից երկում է, որ գործ կատարել կարելի է և այն էլ շատ մեծ չափով, միմիայն պէտք է:

սրտով կաղել գործին, սիրել նրան ու հաւատալ Հաւատը  
լեռներ շարժել կարող է:

—Ահա մենք եկել ենք ձեզ մօտ, քոյր Վարդառէ,  
ասաց Վիրջինիան, հենց այդ հաւատով զօրանալու, ու-  
սանելու, թէ ինչպէս դուք կանացի թոյլ ուժերավ կամաց  
կամաց հեռացնում էք մարդկանց ճանապարհի վրայից  
վշտի, արատի ու աղքատութեան ահագին ժայռը: Օգ-  
նեցէք մեզ խորհրդով, իսկ եթէ հնարաւոր է, նաև զոր-  
ծով, անձնական մասնակցութեամբ օգնութեան հասէք  
մեզ, միացէք մեզ հետ կամ մեզ թոյլ տուէք ձեզ հետ  
միանալու:

Վիրջինիան պատմեց իրենց խմբի ծագման ու ան-  
ման ամբողջ պատմութիւնը և թէ ինչպէս ու ինչի համար  
էր եկել նա քոյր Սննայի տնակը:

Պառաւը ուշադրութեամբ լսում էր նրան, ժամանակ  
առ ժամանակ գլխով հաւանութեան նշան անելով:

—Նատ ուրախ եմ, սիրելի օրինորդ, որ եկաք ինձ  
մօտ: Իմ հիւրերը պատմել են ինձ ձեր «Փարոսի» մասին  
և այդ ինձ շատ հետաքրքրում էր: Ի որտէ ուրախացայ,  
որ մեր քաղաքի դատարկութեան մէջ մի ովագիս էլ է  
առաջ եկել: Իսկ այժմ, ձեր արած պատմութիւնից յե-  
տոյ, ես աւելի շատ, քան այդ թշուառների նկատմամբ,  
ձեզ համար եմ ուրախանում: Զէ որ գուք, ձեր խումբը,  
Ռւդիդ Անկիւնի մոռացուած թշուառների մօտ գնալով,  
բախտաւորութեան ամենահարուստ դանձերից մէկին էք  
հանդիպել: Դուք դժել էք մաքուր ուրախութեան ու  
ճշմարիտ երջանկութեան բանալին:

—Ես յիշում եմ վազուց կարդացած մի շատ հե-  
տաքրքրական պատմութիւնն Հարաւային իտալիոյում,  
Միջերկրական ծովի ափին, Նէապոլից ոչ հեռու, անգլի-  
ական մի միլիոնատէր լորդ ունենում է մէկ հրաշալի  
դղեակ: Բնութեան դիւթիչ գեղեցկութիւնը, մեզմ կլի-  
ման, շինութեան արտաքին հիանալի ճարտարապետու-  
թիւնն և ներքին նուրբը ու գեղեցիկ զարդարանքը դարձ-  
նում էին այդ դղեակը հանդստութեան մի անման վայր:

Առկայն լորդն ու իւր ամբողջ ընտանիքն ամեն անգամ, երբ այդաեղ էին դալիս, իրենց լաւ չեին զգում, հիւանդանում էին ու մաշուում։ Ամենալաւ բժիշկները զլուխ էին կոտրում իմանալու դրա պատճառը և ոչ մի եզրակացութեան դալ չեին կարողանում։ Լորդը արգէն ուզում էր թողնել ընդմիշտ դղեակը, որքան էլ հա թանգինէր իւր սրտին ու պատենեկութեան քաղցր յիշողութիւնների հետ կապուած։ Այդ միջոցներին դղեակի կառավարիչը պատահաբար դետնի տակը հետազօտելիս հանդիպեց քայլոցուած դիակներից մնացած փտած ոսկորների մի կոյտի։ Այն ժամանակ ամեն ինչ պարզուեցաւ։ Հրաշակերտ դղեակը ինքն էր իւր մէջ պարունակում մահուան պատճառը և բաւական էր հեռացնել դետնի միջից դիակները, որպէս զի դղեակի մէջ քնառ կուողների բոլոր հիւնդութիւնները անհետ կորչէին։

Ի՞նձ այնպէս է թուում, բացատրեց քոյր Վարվառէն, որ անգլիական լորդի դղեակի այս պատմութիւնը շտանման է մեր այժմեան հարուստ գառակորդի մեծամասնութեան վարուծ կեանքին։ Չնայած բոլոր յարմարութիւններին ու առաւելութիւններին, կուշտ մարդկանց կեանքը այն պատճառով է գժգոյն ու պայծառ ուրախութիւնից զուրկ, նրա համար ենք մենք ամենքս այսքան թմրած, թոյլ, եռանգուն աշխատանքի անընդունակ, որ մենք մեր մէջ գիտել ենք կրում, մեռած որտով ենք ապրում։ Մեր մէջ չկայ կենդանի սիրտ, կենդանի սէր, Ռւստի մեզ համար մատչելի չէ կեանքի վսեմ գեղեցկութիւնը՝ հոգու այն հիացմունքը, որ ունենում է մարդ իւր օդնութեամբ առաջ բերած մերձաւորի երջանկութիւնը տեսնելիս ես իմ կեանքում գէպի մարդիկ ցոյց տուած սիրոյ պատճառով այնքան այդպիսի մաքուր ու պայծառ ուրախութիւն եմ ունեցել, որ անդադար կուզէի ասել ամեն մի մարդու, «Եթէ ուզում ես իսկական ուրախութիւն ու երջանկութիւն ունենալ, աշխատիր ուրիշներին երջանկութեան բանալին գտնուում է մերձաւորիդ որտում»։

Այս խօսքերը ասելիս քոյր Վարվառէի գէմքը այնպէս սիրալիր կերպով փայլում էր, նրա խօսքի մէջ այնքան ոյժ ու հաւատ էր արտայայտուում, որ Վիրջինիան չկարողացաւ իրեն պահել, փաթաթածուեց նրա վզովս ու տաց.

— Տուեք ինձ այդ բանալին, բաց արեք նրանով իմ սիրութ:

Այդ միջացին սենեակ մտան մէկը միւսի յետից պատառուած շորերով, մոայլ գէմքով շորս թափառաշրջիկներ, երեսում էր, որ նրանք քոյր Վարվառէին ճանաչում էին առաջուց կուռ ներս մտան, նստեցին սեղանի շնորջը և ժամանակ առ ժամանակ մոայլ կերպով աչքի տակով նայում էին Վիրջինիային, Վիրջինիան նոյն իսկ փոքր ինչ վախեցաւ, սակայն քոյր Վարվառէն սկսեց կերակրել նորեկներին, կարծես դրանք իւր ամենամօտիկ և լաւ բարեկամները լինէին:

— Աղօթենք, եղբայրներ, առաց քոյր Վարվառէն երբ կերակուրը սեղանի վրայ էր դրուած արգէն:

— Դու էլ հէնց քո աղօթքի յետնից ես, պառաւ, խուլ կերպով մրժմրժաց թափառաշրջիկներից մէկը, Միթէ չես ձանձրանում օրը քառոսուն անգամ աղօթք ասելուց Ո՞ւմ համար են քո աղօթքները, Միթէ որ հէ խորհուրդ ունի մեր՝ գողերիս աղօթքը,

— Ինչու պէտք է աղօթքը ինձ ձանձրացնէ, բարեկամ, հանդարտութեամբ հարցրեց քոյր Վարվառէն: Մանաւանդ որ դուք շատ ուշ ուշ էք երեսում այստեղէ հէս տարի կը լինի որ ձեզ չեմ տեսել: Դուք բոլորովին մոռացել էք ձեր պառաւին:

— Քեզ մոռանալ չի կարելի, քաղցրութեամբ առաց միւսը, Մինչեւ մեր ման էլ պէտք է յիշենք քեզ:

— Ենորհակալ եմ, բարեկամներ, Ասացէք որտեղ էիք, ինչ էիք անում:

— Էլ մի հարցնիլ, պառաւ, կրկին խօսեց առաջինը, Շատ տեղեր ենք եղել, իսկ թէ ինչեր ենք արել, ամօթէ այստեղ քեզ մատ պատմելլ:

Հապա էլ ինչու ես ասում թէ աղօթելու պէտք

շկայ. զգում եռ որ ամօթէ, հէնց իսկոյն և եթ ներուանն  
խնդրիր Առտուծուց, աղօթիր:

— Բայց միթէ մեր՝ գողերիո աղօթքը կարող է հա-  
ճելի լինել Առտուծուն:

— Հէնց այդպիսի աղօթքն է աւելի հաճելի Առտու-  
ծուն, երբ բարի, արդար մարդիկն են աղօթում, այդ-  
տեղ զարմանալու բան չկայ. այդ այդպէս էլ պէտք է  
լինէր: Այլ բան է, երբ գողը, չարագործը, հարրեցողը  
կամ նոյն իսկ մարդասպանն է աղօթում: Այդպիսի  
աղօթքը հազուագիւտ է և աւելի արժեք ունի:

Թափառաշրջիկները Աջականնեցին,  
ձեռքերնին կրծքերի վրայ գրին, և քոյր Վարվառէն  
ոկսեց աղօթել.

— Տէր Աստուած, տնւր մեղ մեր ամենօրեայ հացը  
և զարթեցրու մեր մէջ Քո արդարութեան քաղցը: Դու  
մեղ կեանք տուիր, տուր նաև ոյժ, որ կարաղանանք Քո  
կամքի համաձայն կեանք վարել: Օրհնիր մեր սեղանը և  
և ուղղիր մեր քայլերը դէպի արդարութեան ճանա-  
պարհը:

Թափառաշրջիկները կարծես թէ փոքր ինչ մեղմո-  
ցան, նրանց գէմքի գաժանութիւնը անցաւ և լուս ոկսե-  
ցին ճաշել:

Միթէ գուք չէք վախենում նրանցից, հարցրեց քոյր  
Վարվառէին Վիրջինիան, երբ նրանք արդէն գնացել էին:  
Զէ որ նրանք կարող են ձեղ այստեղ սպանել:

— Ո՞չ, պատասխանեց պաւառը, նախ, ես հաստա-  
տուն կերպով հաւատում եմ, որ առանց Աստուծոյ  
կամքի մի մաղ անգամ չի ընկնում մարդու դլիսից. և  
երկրորդ, հէնց նոքա իրենք են ինձ պաշտպանումն, ինձ  
մօտ երբեմն գալիս են դրանցից աւելի սարսափելիները  
և հէնց իրենք ասում են, «մեզնից դու մի վախենար,  
քոյր Վարվառէ, մենք մեր գանակը քո չէմքից ներս չենք  
քերիլ»:

Մի անգամ ինձ այսպիսի մի գէպը պատահեց:  
երեք թափառաշրջիկ եկան ինձ մօտ մէկը միւսից աւելի

պատուաւած։ Հաղոստի վոխարէն ինչ ոչ ցնցոտիներ էին կախուած նրանց վրայից։ Տանը ինձ մօտ պատրաստի երկու շապիկ կար (ազատ ժամերին ես շապիկ ներ եմ կարում այդպիսիների համար), երկուսին հառաւ, երրորդին՝ ոչ նա զայրացաւ, սկսեց հայհոյեր ես նրան հանգստացնում եմ, իսկ նա աւելի է կատազում։

— Ապասիր, ասում է, ես այդ քեզ ցոյց կը տամ։ Ընկերները նրա ձեռքերից բռնեցին և գուրս տարան։ Մի ժամի չափ անցկացաւ, ես արդէն հանգստացել էի ու մոռացել. յանկարծ նա ներս է մտնում ու ընկնում իմ ոտները։

— Ներիր։

Տէր ընդ քեզ, ասում եմ, ես չեմ նեղացել, վեր կաց։

— Ներիր ու գրիր, որ գու չես նեղացել ինձնից։

— Ասում եմ, որ չեմ նեղացել, վեր կաց։

Վեր է կենում ու նորից խնդրում է։

— Մի տոմսակ տուր, որ չես նեղացել։

— Ի՞նչ ես անում տոմսակը։

— Ընկերներիս պէտք է տամ։

— Ո՞ր ընկերներիդ, ինչի՞ համար։

— Այն ընկերներիս, որոնք այստեղ էին ինձ հետ նրանք ինձ քաշ տուին անտառը, ձեռք ու սոքս կապեցին ու սկսեցին ձեծել, քեզ հայհոյելուս համար։ Այժմ նրանք ուղարկեցին ինձ ձեզ մօտ ներողութիւն ինդրելու և ասացին. եթէ ներման տոմսակ չըերես, մեր ձեռքից չես պրծնիլ։

Ո՛չ, իմ սիրելի օրինրդ, որտեղ սէր կայ, այնտեղ երկիւղ չկոյ մարդկանցից։ Սիրով վայրենի գաղաններին անգամ մարդիկ ընտելացնում են, իսկ մարդկանց հետ, ինչքան էլ որ վատ լինին նրանք, միշտ կարելի է կառավարուել, եթէ միայն մարդու մէջ սէր լինի գէպի իւր ընկերը։

Այդ բոլորը ճիշդ են, սիրելի քոյր Վարվառէ, ասաց Վերջինիան, բոյց ասացէք ի սէր Աստուծոյ, ինչպէս պէտք

է ձեռք բերել այդ տեսակ սէր գէպի մարդիկ, ինչ պէտք է անել, երբ, թէպէտ և մարդ ուղաւմ է սիրել իւր մեր ձաւորներին, սակայն կենդանի սէր չունի նրանց նկատմամբ։ Ամենքին էլ հօ չի տուած այնպիսի մի բարի սիրտ, ինչպէս օրինակ, ձերն է, ներեցէք գովասանքիս համար, ամենքի ուժն էլ հօ չի պատիլ սիրոյ այդ օշինակ սիրաւգործութեան համար։

— Ինչու էք այդպէս կարծում։ Այդ ուղիղ չէ։ Հարկաւ, ամեն մի հատիկ էլ չի աճում՝ ու պառզ տալիս, շատերը կորչում են, բայց, անկասկած, իւրաքանչիւր հատիկի մէջ էլ կենսական ոյժ կայ թաքնուած և այդ ոյժը բարեյաջող հանդ ամանքներում անխուսափելի կերպով պէտք է երեան գայ։ Խնդիրն այն է, թէ ինչպիսի հոգեսր մթնոլորտում ենք ապրում մենք, ինչ տեսակ բարոյական օդ ենք ներշնչում։ Կայիրէի շոր օդը, Զուիցերիսայի լեռների բարձունքները և Նիցցայի ափունքները ամրացնում ու բռնժում են մարդու նոյն իսկ հիւանդ թոքերը, իսկ ճահճուտ տեղերի փուած կլիման քայլայում է նոյն իսկ մարդու առողջ կուրծքը։ Պէտք է յաճախ վեր ելնել «լեռների բարձունքները»՝ աշխատել, որչափ հնար է, յաճախ լաւ բռպէներ զսեմացնող տպաւութիւններ ունենալ։ Ներեցէք այն բանուորներին, որոնք աշխատում են շոգենաւերի, գործարանների հնոցների դժոխային տաքութեան մէջ։ Նրանք ոչ մի ազատ ըսպէ ձեռքից չեն փախցնում, որ թարմ օդի մէջ դուրս գան և գէթ մի քանի անդամ ազատ կրծքով շնչեն։ Մենք ևս պէտք է աշխատենք օգտուել ամեն մի յարմար ըսպէից կեանքի սովորական խեղդող մթնոլորդից գէպի մաքուր, թարմ, ազատ բարձունքը ելնելու։ Ինձ երբեմն շատ է օգնում լաւ դիրքը, նկար, երգը, Գուցէ գուք չհաւատաք, բայց ես, պառաւս, յաճախ կարդում եմ «Թովմաս Եղբօր տնակը» և ինձ թուում է, որ մենք այդի զուր ենք միմիայն մանկական գիրք համարում։ Այդ գիրքը հասակաւորներին աւելի անհրաժեշտ է, քան մասնակներին։ Նրա մէջ շատ մեծ սէր կայ արտայայտուած

դէպի մարդը և ամեն մի կարդացողի սրտում նոյն տեսակ սէր է զարթեցնում։ Ամեն մի ընթերցումից յետոյ ինձ թուում է թէ, թէ իմ սրտում բարու մի նոր սատ է աւելանում, մի նոր կոկն է բացուում այն հրաշալի ծաղիի վրայ, որի անունն է սոէր դէպի մարդը։ Նոյն պիսի բարերար ու ազնուացնող ազգեցութիւն անում մարդու վրայ նաև լաւ նկարը, գեղեցիկ երգն ու եղանգը ժամանութիւնը։

Երբ մարդ դիտում է մի հրաշալի նկար, լսում է գեղեցիկ երաժշտութիւն կամ կարդում մի լաւ գիրք, այնպէս է զգում, իբր թէ սեղգող սենեակի լուսամուտի դոնակը բացուում է յանկարծ, սենեակը լցուաւմ է աղատ դաշտերից վչող գարնահային անուշ բուրմունքով և մարդուն դէպի ընդարձակ, գեղեցիկ դաշտը ձգում։ Այնպէս էլ բոլոր այդ նկարներն ու գլուքերն են ձգում մարդուն դէպի լուսոյ ու ջերմութեան աղբիւրը, որով նրանք ներաշընչուած են, դէպի սիրոյ յաւիտենական գիրքը, դէպի Աւետարանը, Նորանով չափեցէք ձեր ամբողջ կեանքը, թէ ինչպէս է ընթանում և ինչպէս պէտք է ընթանայ։ Տեսէք թէ դուք ինչպէս էք վարուում մարդկանց հետ և ինչպէս էք վարուում Քրիստոս։ Այն ժամանակ չի կարող պատահել, որ դուք առաջաւայ նման քարասիլու մնաք և կարծէք, որ իբր թէ դէպի մարդիկ ունեցած սէրն և մերձաւորին ծառայելը մի բացախիկ երևոյթ է, ընդհանկառակը, դուք կը հասկանաք, նոյն խակ կըզգաք, որ փոխադարձ յարաբերութեանց մէջ մեր ունեցած դաժանութիւնն ու քարասիլութիւնն է մի անքնական երևոյթ։ Դժուար է պնդել, թէ մարդկային կեանքի ընական օրէնքը՝ գոյութեան կռուի օրէնքն է։ Ամեն տեսակ կեանքի ընական օրէնքը ոչ թէ անջատումն ու բաժանումն է, այլ մերձեցումն ու միացումը։

— Սիրելի Վիրջինիա, ասաց քոյր Վարվառէն, այս է իմ վերջին խօսքը. Եթէ ուզում էք մարդկանց սիրել սովորել, մօտեցէք նրանց, աւելի սերտ յարաբերութիւն հաստատեցէք նրանց հետ. Մարդկանց սրտերը երբէք

սառը չեն մնալ, եթէ որ նրանք սերտ կերպով մօտենան միմեանց։ Այդ կերպ վարուելով, թէպէտ և ամենքը հերասներ չեն գառնալ, սակայն, անկասկած ամենքն էլ կարող են սիրով ջերմանալ։

Այդ միջոցին ներս մտան մի խուճը նոր «Հիւրեր», քոյր Վարվառէն վերջ տուեց խօսակցութեան՝ ասելով։

— Ներեցէք, սիրելիս, ստիպուած եմ վերջացնելու մեր խօսակցութիւնը, բայց ձեր գործն ինձ շատ հետաքրքրում է։ Թոյլ տուէք, որ ես ինքս մի երեկոյ ձեզ մօտ գամ այդ մասին խօսելու։ իսկ առ այժմ ցտեսութիւն։

Ծուռ, թարգմ. Մամբրէ Վարդապետ։

(Նարուհակելի)

### ԵՐԿԱՐ ՃԱՆԱԱՊԱՐՀ

Մենակ գնում եմ երկար ճանապարհ՝  
Արտերի միջով կանաչ ու սիրուն,  
ինձ ժպտում է հեզ երկինքը պայծառ,  
Եւ ծաղկելուակ գեղեցիկ գարուն։

Ու մացառների թաւ ոստերի մէջ՝  
Արտոյտն է երգում քաղցր դայլայլով,  
Ու կանաչ, ծաղկած սէգ ափերի մէջ  
Առուն է ժպտում երկնացոլ փայլով։

Երգիր, արտուտիկ, իմ ազատ թռչնիկ,  
Երգել քեզ արժէ, անհոգ անվհեր,  
Քանի քո երգիչ ու սիրող սրտիկ՝  
Քեզնից զատ չունի ոչ իշխան, ոչ տէր։

Քանի կենսուրալս և զուարթ բնօւթիւնն  
Հպում է մեղմիկ սրտիդ լարերին,